

**ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի  
Որոշում N 1/1573Ա**

**24/12/2009**

**ՌԵՊՈՐՏԱԿԱՆ ՌԵՊՈՐՏԱՅԻՆ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՌԵՊՈՐՏԱԿԱՆ ՌԵՊՈՐՏԱՅԻՆ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթները՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ .**

1. Հաստատել «Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավաբանական վարչությանը՝

2.1. մինչև 2010 թվականի հունվարի 31-ը ապահովել Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերի հետ սույն որոշման 1-ին կետով հաստատված գլխավոր համաձայնագրի կնքումը.

2.2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2008 թվականի դեկտեմբերի 30-ի «Ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը» հաստատելու մասին թիվ 1/1318Լ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2007 թվականի հունիսի 07-ի «Դրամական միջոցների (Լոնբարդային վարկերի) տրամադրման համաձայնագրի» օրինակելի ձևը հաստատելու մասին թիվ 1/745Ա որոշումներով հաստատված Համաձայնագրերով (այսուհետ՝ Համաձայնագրեր) սահմանված կարգով ծանուցել Համաձայնագրերը ստորագրած բանկերին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Համաձայնագրերը դադարեցնելու մտադրության վերաբերյալ:

3. Սույն որոշման 2.1.-րդ կետով սահմանված ժամկետը լրանալու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2008 թվականի դեկտեմբերի 30-ի «Ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը» հաստատելու մասին թիվ 1/1318Լ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2007 թվականի հունիսի 07-ի «Դրամական միջոցների (Լոնբարդային վարկերի) տրամադրման համաձայնագրի» օրինակելի ձևը հաստատելու մասին թիվ 1/745Ա որոշումները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ**

Բովանդակություն

Հավելված .....	1
<b>Հոդված 1. Ընդհանուր դրույթներ .....</b>	<b>2</b>
<b>Հոդված 2. Կողմերի միջև Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը.....</b>	<b>4</b>
<b>Հոդված 3. Կենտրոնական բանկի հետ Աճուրդի միջոցով Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը .....</b>	<b>6</b>
<b>Հոդված 4. Կենտրոնական բանկի հետ Լոնդրային Ռեպո գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը .....</b>	<b>8</b>
<b>Հոդված 5. Կողմերի պատասխանատվությունը .....</b>	<b>10</b>
<b>Հոդված 6. Վեճերի լուծման կարգը.....</b>	<b>11</b>
<b>Հոդված 7. Հատուկ սպանաններ .....</b>	<b>11</b>
<b>Հոդված 8. Համաձայնագրի գործողության ժամկետը .....</b>	<b>11</b>
<b>Հոդված 9. Անհատական հարկի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր).....</b>	<b>12</b>
<b>Հոդված 10. Այլ դրույթներ.....</b>	<b>12</b>
<b>Հոդված 11. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները</b>	<b>13</b>
Հավելված 1. ....	14
Հավելված 2. ....	15
Հավելված 3. ....	16
Հավելված 4. ....	17
Հավելված 5. ....	18
Հավելված 6. ....	19
Հավելված 7. ....	21

**ՌԵՊՈՒ/ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Հայաստանի Հանրապետություն  
ք. Երևան

« » «

» 20 թ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) և սույն համաձայնագիրը կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերը (այսուհետև՝ Բանկեր) սահմանում են, որ միմյանց (այսուհետև՝ Կողմեր) միջև Ռեպո և Հակադարձ ռեպո գործարքները կնքելու են սույն համաձայնագրով սահմանված կարգով՝ պահպանելով սույն համաձայնագրի պահանջները:

***Հոդված 1. Ընդհանուր դրույթներ***

- 1.1 Սույն համաձայնագրի իմաստով՝
  - 1.1.1. Ռեպո/Հակադարձ ռեպո գործարք (այսուհետև՝ Գործարք)՝ այն գործարքը, որով Վաճառողը Գործարքի կատարման օրը Գնորդին է վաճառում սույն համաձայնագրով նախատեսված Արժեթղթերը՝ Գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ Գնորդը սեփականության իրավունքով ձեռք է բերում Արժեթղթերը՝ դրանք Գործարքի մարման օրը վերավաճառելու պարտավորությամբ.
  - 1.1.2. Լոնբարդային Ռեպո գործարք՝ այն Գործարքը, որի պարագայում Բանկը հանդիսանում է Վաճառող, իսկ Կենտրոնական բանկը՝ Գնորդ.
  - 1.1.3. Արժեթուղթ՝ Կենտրոնական բանկի կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր.
  - 1.1.4. Աճուրդ՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարք կնքելու նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որին Բանկերը ներկայացնում են հայտեր.
  - 1.1.5. Աճուրդի օր՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարք կնքելու նպատակով կազմակերպվող մրցութային գործընթացի կազմակերպման օր.
  - 1.1.6. Գնորդ՝ Գործարքի կատարման օրը սեփականության իրավունքով Արժեթղթեր ձեռք բերող.
  - 1.1.7. Վաճառող՝ Գործարքի կատարման օրն Արժեթղթեր վաճառող.
  - 1.1.8. ՀՏ 505՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաղորդագրության էլեկտրոնային ֆորմատ՝ Աճուրդի հայտ.
  - 1.1.9. ՀՏ 512՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաղորդագրության էլեկտրոնային ֆորմատ՝ Աճուրդին մասնակցած հայտի պատասխան.
  - 1.1.10. ՀՏ 520՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաղորդագրության էլեկտրոնային ֆորմատ՝ Արժեթղթերի գնման հանձնարարական.
  - 1.1.11. ՀՏ 521՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաղորդագրության էլեկտրոնային ֆորմատ՝ Արժեթղթերի վաճառքի հանձնարարական.

- 1.1.12. ՀՏ 534՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաղորդագրության էլեկտրոնային ֆորմատ՝ գործառնության ծանուցման հաղորդագրություն.
- 1.1.13. Ռեպո գործարքի հայտ՝ Վաճառողի կողմից Գնորդին ներկայացված Ռեպո գործարք կնքելու առաջարկ ([Հավելված 1](#)՝ Կողմերի միջև կնքվող Գործարքների դեպքում, [Հավելված 2](#)՝ Լոնքարդային Ռեպո գործարքի դեպքում, ՀՏ 505՝ Աճուրդի միջոցով կնքվող Գործարքների դեպքում).
- 1.1.14. Հակադարձ ռեպո գործարքի հայտ՝ Գնորդի կողմից Վաճառողին ներկայացված Հակադարձ ռեպո գործարք կնքելու առաջարկ ([Հավելված 4](#)՝ Բանկի և Կենտրոնական բանկի միջև Գործարքների դեպքում, ՀՏ 505՝ Աճուրդի միջոցով կնքվող Գործարքների դեպքում).
- 1.1.15. Հայտի հաստատում (մասնակի հաստատում)՝ հայտը ստացողի ծանուցումը հայտը ուղարկողին՝ վերջինիս կողմից ներկայացված Գործարք կնքելու առաջարկն ընդունելու (մասնակի ընդունելու) վերաբերյալ ([Հավելված 3](#), Աճուրդի միջոցով կնքվող Գործարքների դեպքում՝ ՀՏ 512): Ընդ որում, սույն կետով նշված հայտի մասնակի հաստատում կարող է իրականացնել միայն Կենտրոնական բանկը. (Բանկի կողմից առաքված ցանկացած հայտ բովանդակում է նաև հայտում նշված պայմանների որոշ մասով (մասնակի բավարարմամբ) Գործարքի կնքման օֆերտա և Կենտրոնական բանկի կողմից նման հայտի որոշ մասով (մասնակի) բավարարումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի իմաստով լրիվ և անվերապահ ակցեպտ է).
- 1.1.16. Հայտի մերժում՝ հայտը ստացողի ծանուցումը հայտը ուղարկողին՝ վերջինիս կողմից ներկայացված Գործարք կնքելու առաջարկը մերժելու վերաբերյալ ([Հավելված 5](#)՝ Կողմերի միջև կնքվող Գործարքների դեպքում, Աճուրդի միջոցով կնքվող Գործարքների դեպքում՝ ՀՏ 512).
- 1.1.17. Գործարքի ծավալ՝ Արժեթղթի անվանական արժեքը.
- 1.1.18. Գործարքի գին՝ Արժեթղթի ընթացիկ գինը, որը հաշվարկվում է սույն համաձայնագրի [Հավելված 6](#)-ի համաձայն:
- 1.1.19. Գործարքի կնքման օր՝ այն Աշխատանքային օրն է, երբ Գործարք կնքող Կողմը հաստատում (մասնակի հաստատում) է Գործարքի մյուս Կողմից ստացված հայտը.
- 1.1.20. Գործարքի կատարման օր՝ այն Աշխատանքային օրն է, երբ Վաճառողի կողմից Գնորդի համապատասխան դեպո հաշվին պետք է մուտքագրվեն Գործարքի առարկա հանդիսացող Արժեթղթերը, իսկ Գնորդի կողմից Վաճառողի համապատասխան դրամային հաշվին՝ ՀՀ դրամը.
- 1.1.21. Գործարքի մարման օր՝ այն Աշխատանքային օրն է, երբ Գնորդի կողմից պետք է Վաճառողից ձեռք բերված Արժեթղթերը մուտքագրվեն Վաճառողի համապատասխան դեպո հաշվին, իսկ Վաճառողի կողմից պետք է Գնորդի համապատասխան դրամային հաշվին մուտքագրվի ՀՀ դրամը: Գործարքի մարման օրը ոչ աշխատանքային օրվան համընկնելու դեպքում Գործարքի մարման օր է համարվում դրան հաջորդող Աշխատանքային օրը.
- 1.1.22. Աշխատանքային օր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տոնի կամ հիշատակի ոչ աշխատանքային օրերից, ինչպես նաև՝ շաբաթ և կիրակի օրերից (եթե այդ օրերը կամ դրանցից մեկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության կողմից չեն հայտարարվել աշխատանքային) բացի ցանկացած օրացուցային օր.

- 1.1.23. Գործառնական օր՝ Աշխատանքային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում իրականացվում է Կենտրոնական բանկի հաճախորդների սպասարկում:
- 1.1.24. Պահառու՝ Արժեթղթերի հաշվեգրումն իրականացնող իրավասու մարմին: Արժեթղթերի Պահառուի գործառնություններն իրականացնում է Կենտրոնական բանկը՝ ապահովելով տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկումը:
- 1.1.25. Դեպո հաշիվ՝ Պահառուի կողմից վարվող Արժեթղթերի հաշվառման հատուկ հաշիվ:
- 1.2. Սույն համաձայնագրով նախատեսված Գործարքի առարկա կարող են հանդիսանալ բացառապես սույն համաձայնագրով նախատեսված այն Արժեթղթերը, որոնք Գործարքի կատարման օրվանից սկսած մինչև Գործարքի մարման օրը ներառյալ ընկած ժամանակահատվածում չեն մարվում (մասնակի մարվում): Արժեկտրոնի վճարման դեպքում արժեկտրոնի գումարը հաշվառվում է Գնորդի (տվյալ պահին Արժեթղթի սեփականատիրոջ) հաշվեկշռում մինչև Գործարքի մարման օրը, իսկ Գործարքի մարման օրը վերադարձվում է Վաճառողին: Գործարքի մարման օրը պետք է վերավաճառվեն միևնույն Արժեթղթերը:
- 1.3. Կողմերը սահմանում են, որ Ռեպո/Հակադարձ ռեպո գործարք է համարվում (այդ թվում՝ հաշվապահական հաշվառման տեսանկյունից) սույն համաձայնագրով սահմանված կարգով կնքված Գործարքը:
- 1.4. Կողմերի միջև Գործարքներ կնքելիս Կողմերը կարող են սահմանել հայտն ուժի մեջ լինելու այլ ժամկետ, քան սահմանված է սույն համաձայնագրով:

***Հոդված 2. Կողմերի միջև Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը***

- 2.1. Կողմերի միջև Գործարքներ իրականացնելիս Արժեթղթերի շարժն ապահովվում է Պահառուի կողմից վարվող Կողմերի դեպո հաշիվներով, իսկ դրամական միջոցների փոխանցումները կատարվում են Կենտրոնական բանկում վարվող Կողմերի համապատասխան դրամային հաշիվներով:
- 2.2. Կողմերի միջև Գործարքների հաշվարկները կատարվում են բացառապես առաքում-վճարման դիմաց (DVP) սկզբունքով:
- 2.3. Գործարքների կնքումը կատարվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն.
  - 2.3.1. Գործարք կնքելու նպատակով Գնորդի/Վաճառողի կողմից Վաճառողին/Գնորդին ներկայացվում է հայտ:
  - 2.3.2. Հայտը ստացած Կողմն իրավունք ունի մերժել (հայտի մերժում) կամ բավարարել (հայտի հաստատում) ներկայացված հայտը:
  - 2.3.3. Գործարք կնքելու հայտը, հայտը հաստատելու, հայտը մերժելու ծանուցումները (այսուհետև՝ Փաստաթղթերը) կարող են ներկայացվել թղթային կամ էլեկտրոնային եղանակով:
 

Թղթային եղանակի կիրառման դեպքում համապատասխան Փաստաթուղթը ներկայացվում է ստացող Կողմին երկու օրինակից, որից մեկը մնում է Փաստաթուղթը ստացող Կողմի մոտ, իսկ մյուսը վերադարձվում է Փաստաթուղթը ներկայացնող Կողմին՝ ստացման

ժամանակի վերաբերյալ նշումով՝ վավերացված ստացողի ստորագրությամբ:

Կողմերի միջև էլեկտրոնային եղանակով կնքվող Գործարքները կնքվում են «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով:

- 2.3.4. Կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրով կարող է նախատեսվել Գործարքների կնքում ՍՎԻՖՏ համակարգի միջոցով: Այդ դեպքում լրացուցիչ համաձայնագրով նախատեսվում են նաև փոխադարձ ստուգվող ֆորմատները ([Հավելված 7](#))
- 2.3.5. Եթե Գործարք կնքելու հայտ առաքած Կողմը մինչև հայտում նշված ժամկետը, իսկ ժամկետի բացակայության դեպքում մինչև հայտի առաքման օրվա ժամը 18:00-ն հայտն ստացած Կողմից ստանում է հայտի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված: Նշված ժամկետներում պատասխան չստանալու դեպքում հայտը համարվում է մերժված:
- 2.4. Սույն համաձայնագրի 2.3 կետի համաձայն կնքված Գործարքների հաշվարկները կատարվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.
  - 2.4.1. Գործարքի Կատարման օրը Վաճառողը պարտավոր է Պահառուին ներկայացնել Արժեթղթերի վաճառքի հանձնարարական (ՀՏ 521), իսկ Գնորդը պարտավոր է Պահառուին ներկայացնել Արժեթղթերի գնման հանձնարարական (ՀՏ 520):
  - 2.4.2. Պահառուն Գործարքի կատարման օրը պարտավոր է իրականացնել Արժեթղթերի փոխանցումը Վաճառողի դեպո հաշվից Գնորդի դեպո հաշվի վրա և դրամական միջոցների փոխանցումը Գնորդի համապատասխան դրամային հաշվից Վաճառողի համապատասխան դրամային հաշվի վրա միաժամանակ՝ միայն Վաճառողի և Գնորդի կողմից ներկայացված սույն համաձայնագրի 2.4.1 կետում նշված հանձնարարականների առկայության դեպքում:
  - 2.4.3. Գնորդի դեպո հաշվի վրա Արժեթղթերը մուտքագրելու պահից Արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է Գնորդին: Գնորդն իրավասու է ազատ տնօրինել, տիրապետել և օգտագործել ձեռք բերված Արժեթղթերը:
  - 2.4.4. Գործարքի մարման օրը Գնորդը պարտավոր է Պահառուին ներկայացնել Արժեթղթերի վաճառքի հանձնարարական (ՀՏ 521), իսկ Վաճառողը պարտավոր է Պահառուին ներկայացնել Արժեթղթերի գնման հանձնարարական (ՀՏ 520):
  - 2.4.5. Գործարքի մարման օրը Պահառուն պարտավոր է իրականացնել Արժեթղթերի փոխանցումը Գնորդի դեպո հաշվից Վաճառողի դեպո հաշվի վրա և դրամական միջոցների փոխանցումը Վաճառողի համապատասխան դրամային հաշվից Գնորդի համապատասխան դրամային հաշվի վրա միաժամանակ՝ միայն Վաճառողի և Գնորդի սույն համաձայնագրի 2.4.4 կետում նշված հանձնարարականների առկայության դեպքում:
  - 2.4.6. Սույն հոդվածի 2.4.1 և 2.4.4 ենթակետերում նշված հանձնարարականները Գնորդի և Վաճառողի կողմից պետք է ներկայացվեն Գործառնական օրվա ընթացքում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Գործառնական օրվա ավարտից հետո ներկայացված հանձնարարականները համարվում են ուշացմամբ ներկայացված:

- 2.5. Գործարքով նախատեսված տոկոսները հաշվարկվում են Գործարքի կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից մինչև Գործարքի մարման օրը ներառյալ, ընդ որում՝ տոկոսները վճարվում են Գործարքի մարման օրը:

***Հոդված 3. Կենտրոնական բանկի հետ Աճուրդի միջոցով Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը***

- 3.1. Գործարքներ իրականացնելիս Արժեթղթերի շարժն ապահովվում է Պահառուի կողմից վարվող Կողմերի դեպո հաշիվներով, իսկ դրամական միջոցների փոխանցումները կատարվում են Կենտրոնական բանկում վարվող Բանկի թղթակցային և Կենտրոնական բանկի համապատասխան դրամային հաշիվներով:
- 3.2. Գործարքների կնքումը կատարվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն.
- 3.2.1. Բանկը Կենտրոնական բանկի հայտարարության հիման վրա Կենտրոնական բանկին Գործարք իրականացնելու հայտ է ներկայացնում:
- 3.2.2. Հայտերն Աճուրդին ներկայացվում են էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով՝ Բանկում տեղակայված «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգի աշխատանքային կայանից, Կենտրոնական բանկի կողմից սահմանված ֆորմատներով: Աճուրդի նույն մասնակցից երկու միատեսակ հայտ ստանալու դեպքում ընդունվում է առաջին ստացված հայտը: Համակարգ մուտքագրված հայտը չի կարող հետ կանչվել, և դրանում փոփոխություններ չեն կարող կատարվել:
- 3.2.3. Բանկը Աճուրդին հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկի կողմից տվյալ Աճուրդի վերաբերյալ տրված հայտարարության ժամից մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը:
- 3.2.4. Բանկերի հայտերը համակարգ մուտքագրվելու պահին անմիջապես ստուգվում են համակարգի կողմից: Աճուրդի պայմանների և/կամ այլ սխալների դեպքում հայտը մերժվում է, ինչի մասին Աճուրդի մասնակիցը տեղեկացվում է ՀՏ 534 հաղորդագրության միջոցով: Հայտը մերժված լինելու դեպքում Աճուրդի մասնակիցը կարող է մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը ներկայացնել նոր հայտ:
- 3.2.5. Եթե Բանկը տարբեր տեսակի վթարների հետևանքով հայտերն ուղարկելու հնարավորություն չունի, ապա այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկի կողմից լիազորված աշխատակիցներին և հայտը (հայտերը) մուտքագրում է Կենտրոնական բանկում տեղադրված հատուկ աշխատանքային կայանից մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը:
- 3.2.6. Եթե Աճուրդի օրվա մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամը Աճուրդի պոտենցիալ մասնակիցների 20 (քսան) տոկոսը սույն համաձայնագրի 3.2.5 կետում սահմանված կարգով Կենտրոնական բանկին տեղեկացրել են հայտերի ուղարկման անհնարինության մասին, ապա աճուրդային գործընթացը դադարեցվում է և 1,5 ժամվա ընթացքում Բանկերին հայտարարվում է Աճուրդը հետաձգելու, չեղյալ համարելու և/կամ նոր Աճուրդ անցկացնելու վերաբերյալ որոշումը:

- 3.2.7. Ռեպո գործարքի հայտում նշվում է Գործարքի այն ծավալը, որով Բանկն առաջարկում է վաճառել Արժեթղթեր Կենտրոնական բանկին:
- 3.2.8. Հակադարձ ռեպո գործարքի հայտում նշվում է Գործարքի այն գինը, որի դիմաց Բանկը առաջարկում է Կենտրոնական բանկից գնել Արժեթղթեր:
- 3.2.9. Կենտրոնական բանկի կողմից Հակադարձ ռեպո գործարքի հայտում նշված Գործարքի գինը կարող է բավարարվել Գործարքի այլ գնով, որը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված և շրջանառությունում առկա պարտատոմսերի համար սահմանված առավելագույն քայլի և առավելագույն արժեկտրոնների արտադրյալը:
- 3.2.10. Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված հայտը պարտավոր է հաստատել (մասնակի հաստատել) կամ մերժել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից Բանկի հայտը հաստատելու (մասնակի հաստատելու) կամ մերժելու դեպքում Կենտրոնական բանկը ծանուցում է Բանկին ՀՏ 512 հաղորդագրության միջոցով:
- 3.2.11. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում մերժել Բանկի կողմից ներկայացված հայտը:
- 3.2.12. Եթե Բանկը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամանակահատվածում ստանում է Հայտի հաստատումը կամ մասնակի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված:
- 3.3. Սույն համաձայնագրի 3.2 կետի համաձայն կնքված Գործարքների հաշվարկները կատարվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.
- 3.3.1. Կենտրոնական բանկն անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման, կատարում է կնքված Գործարքին կամ Գործարքներին համապատասխան Արժեթղթերի փոխանցումներն ու դրամական վճարումները:
- 3.3.2. Գործարքի կատարման օրը Կենտրոնական բանկը պարտավոր է իրականացնել Արժեթղթերի փոխանցումը Վաճառողի դեպո հաշվից Գնորդի դեպո հաշվի վրա և դրամական միջոցների փոխանցումը Գնորդի համապատասխան դրամային հաշվից Վաճառողի համապատասխան դրամային հաշվի վրա:
- 3.3.3. Գնորդի դեպո հաշվի վրա Արժեթղթերը մուտքագրելու պահից Արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է Գնորդին:
- 3.3.4. Գործարքի մարման օրը Կենտրոնական բանկն անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման կատարում է կնքված Գործարքին կամ Գործարքներին համապատասխան Արժեթղթերի փոխանցումներն ու դրամական վճարումները:
- 3.3.5. Գործարքի մարման օրը Կենտրոնական բանկը պարտավոր է իրականացնել Արժեթղթերի փոխանցումը Գնորդի դեպո հաշվից Վաճառողի դեպո հաշվի վրա և դրամական միջոցների փոխանցումը Վաճառողի համապատասխան դրամային հաշվից Գնորդի համապատասխան դրամային հաշվի վրա:
- 3.4. Գործարքով նախատեսված տոկոսները հաշվարկվում են Գործարքի կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից մինչև Գործարքի

մարման օրը ներառյալ, ընդ որում՝ տոկոսները վճարվում են Գործարքի մարման օրը:

- 3.5. Կողմերը պարտավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ապահովել կատարվող գործառնությունների գաղտնիությունը:

**Հոդված 4. Կենտրոնական բանկի հետ Լոմբարդային Ռեպո գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը**

- 4.1. Կողմերի միջև Գործարքներ իրականացնելիս Արժեթղթերի շարժն ապահովվում է Պահառուի կողմից վարվող Կողմերի դեպո հաշիվներով, իսկ դրամական միջոցների փոխանցումները կատարվում են Կենտրոնական բանկում վարվող Բանկի թղթակցային և Կենտրոնական բանկի համապատասխան դրամային հաշիվներով:
- 4.2. Գործարքների կնքումը կատարվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն.
- 4.2.1. Բանկը Կենտրոնական բանկին Լոմբարդային Ռեպո գործարք իրականացնելու հայտ է ներկայացնում ([Հավելված 2](#)):
- 4.2.2. Բանկի կողմից Լոմբարդային Ռեպո գործարք կնքելու նպատակով հայտի ներկայացումը և Կենտրոնական բանկի կողմից հայտի մերժումը իրականացվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում:
- 4.2.3. Հայտը, հայտի մերժումը ներկայացվում են «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով ըստ սահմանված կարգի: Եթե Բանկը տարբեր տեսակի վթարների հետևանքով (կապի խզում, Կողմի հսկողության ներքո գործող տեխնիկաձրագրային ապահովման անսարքություն և այլն) «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով հայտը ուղարկելու հնարավորություն չունի, ապա այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկի կողմից լիազորված աշխատակիցներին և հայտը ներկայացվում է թղթային եղանակով: Թղթային եղանակի կիրառման դեպքում Բանկը հայտը ներկայացնում է Կենտրոնական բանկին երկու օրինակից, որից մեկը մնում է Կենտրոնական բանկի մոտ, իսկ մյուսը վերադարձվում է Բանկին՝ ստացման ժամանակի վերաբերյալ նշումով՝ վավերացված ստացողի ստորագրությամբ:
- Կողմերի միջև էլեկտրոնային եղանակով կնքվող Գործարքները կնքվում են «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով:
- 4.2.4. Կենտրոնական բանկը Լոմբարդային Ռեպո գործարք կնքում է ընդունված վերջին այն հայտի հիման վրա, որը մերժման ենթակա չէ:
- 4.2.5. Կենտրոնական բանկը հայտը մերժում է միայն այն դեպքում, երբ հայտը լրացված չէ սույն համաձայնագրով սահմանված ձևով, դրանում արտացոլված տվյալները լրացված են սխալ կամ ամբողջական չեն:

- 4.2.6. Եթե Բանկը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամանակահատվածում չի ստանում հայտի մերժում, ապա Լոմբարդային Ռեպո գործարքը համարվում է կնքված:
- 4.3. Սույն համաձայնագրի 4.2 կետի համաձայն կնքված Լոմբարդային Ռեպո գործարքների հաշվարկները կատարվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.
- 4.3.1. Կենտրոնական բանկն անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման, կատարում է կնքված Լոմբարդային Ռեպո Գործարքին համապատասխան Արժեթղթերի փոխանցումներն ու դրամական վճարումները:
- 4.3.2. Գործարքի կատարման օրը Կենտրոնական բանկը պարտավոր է իրականացնել Արժեթղթերի փոխանցումը Վաճառողի դեպո հաշվից Գնորդի դեպո հաշվի վրա և դրամական միջոցների փոխանցումը Գնորդի համապատասխան դրամային հաշվից Վաճառողի համապատասխան դրամային հաշվի վրա:
- 4.3.3. Գնորդի դեպո հաշվի վրա Արժեթղթերը մուտքագրելու պահից Արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է Գնորդին: Գնորդն իրավասու է ազատ տնօրինել, տիրապետել և օգտագործել ձեռք բերված Արժեթղթերը:
- 4.3.4. Գործարքի մարման օրը Կենտրոնական բանկն անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման կատարում է կնքված Լոմբարդային Ռեպո գործարքին համապատասխան Արժեթղթերի փոխանցումներն ու դրամական վճարումները:
- 4.3.5. Գործարքի մարման օրը Կենտրոնական բանկը պարտավոր է իրականացնել Արժեթղթերի փոխանցումը Գնորդի դեպո հաշվից Վաճառողի դեպո հաշվի վրա և դրամական միջոցների փոխանցումը Վաճառողի համապատասխան դրամային հաշվից Գնորդի համապատասխան դրամային հաշվի վրա:
- 4.3.6. Լոմբարդային Ռեպո գործարքով նախատեսված տոկոսները հաշվարկվում են Գործարքի կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից մինչև Գործարքի մարման օրը ներառյալ, ընդ որում՝ տոկոսները վճարվում են Գործարքի մարման օրը:
- 4.3.7. Կենտրոնական բանկը Լոմբարդային Ռեպո գործարքով ամրագրված գործառնությունները իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում:
- 4.3.8. Լոմբարդային Ռեպո գործարքը կնքվում է մեկ օր ժամկետով:
- 4.3.9. Լոմբարդային Ռեպո գործարքի տոկոսադրույքը հանդիսանում է Լոմբարդային Ռեպո գործարքի կնքման օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված Լոմբարդային Ռեպո գործարքի տոկոսադրույքը:

## **Հողված 5. Կողմերի պատասխանատվությունը**

- 5.1. Գործարքի կատարման օրը Գործարքին համապատասխան Արժեթղթերը Վաճառողի դեպո հաշվում առկա չլինելու և (կամ) համապատասխան հանձնարարականները չներկայացնելու դեպքում Վաճառողը Գնորդին վճարում է տուժանք՝ հայտում նշված Գործարքի գնի 0.2 (գրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով, իսկ հայտը և հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:
- 5.2. Գործարքի կատարման օրը Գործարքին համապատասխան դրամական միջոցները Գնորդի համապատասխան դրամային հաշվում առկա չլինելու և (կամ) համապատասխան հանձնարարականները չներկայացնելու դեպքում Գնորդը Վաճառողին վճարում է տուժանք՝ հայտում նշված Գործարքի գնի 0.2 (գրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով, իսկ հայտը և հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:
- 5.3. Գործարքի մարման օրը Վաճառողի համապատասխան դրամային հաշվում Գործարքին համապատասխան դրամական միջոցները առկա չլինելու և (կամ) համապատասխան հանձնարարականները չներկայացնելու դեպքում Վաճառողը Գնորդին վճարում է տուժանք՝ հայտում նշված Գործարքի գնի 1 (մեկ) տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար:  
Սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի մարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից առավելագույնը երեք Աշխատանքային օր: Եթե այդ ժամանակահատվածի ընթացքում Վաճառողի կողմից վճարում չի կատարվում, ապա Գործարքի Կողմերի միջև դադարում են այդ Գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները:
- 5.4. Գործարքի մարման օրը Գնորդի դեպո հաշվում Գործարքին համապատասխան Արժեթղթերը առկա չլինելու և (կամ) համապատասխան հանձնարարականները չներկայացնելու դեպքում Գնորդը Վաճառողին վճարում է տուժանք՝ հայտում նշված Գործարքի գնի 1 (մեկ) տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար:  
Սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի մարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից հաշված առավելագույնը երեք Աշխատանքային օր: Եթե այդ ժամանակահատվածի ընթացքում Գնորդի կողմից համապատասխան Արժեթղթերի փոխանցում տեղի չի ունենում, ապա Գործարքի Կողմերի միջև դադարում են այդ գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները:
- 5.5. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում իր կողմից վարվող Բանկերի թղթակցային հաշիվներից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձել սույն հողվածով նախատեսված

- 5.6. Պահառուի կողմից թույլ տրված սխալների կամ պարտականությունների չկատարման, ուշացումով կատարման կամ ոչ պատշաճ ձևով կատարման դեպքում Պահառուն պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### ***Հոդված 6. Վեճերի լուծման կարգը***

- 6.1. Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ երեսուցյա ժամկետում: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման հինգ Աշխատանքային օրվա ընթացքում:
- 6.2. Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում դրանք լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

#### ***Հոդված 7. Հատուկ պայմաններ***

- 7.1. Սույն համաձայնագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս գրավոր ձևով կազմված և համատեղ ստորագրված և կնքված են Կողմերի կողմից:
- 7.2. Սույն համաձայնագրի կողմ չհանդիսացող Բանկերը կարող են միանալ սույն համաձայնագրին՝ այդ մասին գրավոր կերպով տեղյակ պահելով Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկը սույն կետով նախատեսված տեղեկացումը ստանալուց հետո երեք Աշխատանքային օրվա ընթացքում համաձայնագրի Կողմերին գրավոր կերպով ծանուցում է Կողմի միանալու մասին:

#### ***Հոդված 8. Համաձայնագրի գործողության ժամկետը***

- 8.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:
- 8.2. Բանկին անվճարունակ, նրա բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից տվյալ Բանկը զրկվում է սույն համաձայնագրով նախատեսված Գործարքները կնքելու իրավունքից:
- 8.3. Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում (ներառյալ սույն համաձայնագրի 8.2 կետում նախատեսված դեպքի) Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:

- 8.4. Ցանկացած Կողմ կարող է սույն համաձայնագրից հրաժարվել՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր կերպով ծանուցելով սույն համաձայնագրի Կողմերին:
- 8.5. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է գործարքի կնքումից առնվազն երկու Աշխատանքային օր առաջ գրավոր ձևով սույն համաձայնագրի Կողմերին տեղեկացնել իր հասցեի, վճարային ռեկվիզիտների, հեռախոսի, ֆաքսի, իրավասու էլեկտրոնային հասցեների, այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում տեղեկացումը ստանալուց հետո երկրորդ Աշխատանքային օրը:

### ***Հոդված 9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)***

Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա էականորեն ազդող անհաղթահարելի ուժի ազդեցության:

Սույն կետի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ չեն համարվում գործադուլները, սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրագենտների կողմից և այլ հանգամանքներ, որոնք սույն պայմանագրի դրույթները խախտող կողմը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

### ***Հոդված 10. Այլ դրույթներ***

- 10.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Կողմերի միջև Կենտրոնական բանկի նախագահի 2008 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1/1318 Լ որոշումով հաստատված ձևով կնքված «Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը » համարվում է լուծված:
- 10.2. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 1 (մեկ) օրինակից, որը պահվում է Կենտրոնական բանկում: Կենտրոնական բանկը յուրաքանչյուր Կողմին հանձնում է սույն համաձայնագրի պատճենը:
- 10.3. Իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում սույն համաձայնագրում, ինչպես նաև դրանց հետագա փոփոխությունները և լրացումները պարտադիր են Կողմերի համար՝ իրավական ակտի ընդունման մասին Բանկին ցանկացած եղանակով ծանուցելու օրվանից՝ առանց սույն համաձայնագրի [Հոդված 7-ում](#) նախատեսված կարգով համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու:

**Հողված 11. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները**

ՀՀ կենտրոնական բանկ  
Հայաստանի Հանրապետություն

Բանկ  
Հայաստանի Հանրապետություն

Հեռախոս  
ՀՀ ԿԲ դեպո հաշիվ  
ՀՀ ԿԲ դրամային հաշիվ

Հեռախոս  
Գ-եպո հաշիվ  
Գ-րամային թղթակցային հաշիվ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Բանկի գործադիր տնօրեն (վարչության  
նախագահ)՝

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված 1.

**ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ  
ՀԱՅՏ N**

Ներկայացվում է համաձայն «\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թվականին կնքված Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «\_\_\_\_\_» բանկից գնել Արժեթղթեր հետևյալ պայմաններով.

Արժեթղթերի թողարկման համարը			
Գործարքի ծավալը			
Տոկոսադրույքը			
Գործարքի գինը			
Գործարքի կատարման օրը			
Գործարքի մարման օրը			
Հայտն ուժի մեջ է մինչև			

\*

«\_\_\_\_\_» բանկ  
ՀՀ ԿԲ նախագահ/գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

Կ.Տ «\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թ.

\* իրավասու էլեկտրոնային հասցեներից ներկայացնելու դեպքում պարտադիր չէ

ԼՈՍԲԱՐԴԱՅԻՆ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ  
ՀԱՅՏ N

Ներկայացվում է համաձայն «\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թվականին կնքված Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «\_\_\_\_\_» բանկից գնել Արժեթղթեր հետևյալ պայմաններով.

Արժեթղթերի թողարկման համարը			
Գործարքի ծավալը			
Գործարքի գինը			

\*

«\_\_\_\_\_» բանկ  
Գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

Կ.Տ «\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թ.

\* իրավասու էլեկտրոնային հասցեներից ներկայացնելու դեպքում պարտադիր չէ

**ՈՒՇՊՈ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՅՏԻ  
ՀԱՍՏԱՏՈՒՄ N**

Առաքվում է «\_\_\_\_\_» բանկին համաձայն «\_\_»  
«\_\_\_\_\_» 20\_\_ թվականին կնքված Ռ-եպո/Հակադարձ ռեպո  
գործարքների կնքման գլխավոր համաձայնագրի:

Ձեր «\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թ. ժամը «\_\_\_\_\_»-ին ներկայացված  
N \_\_ Ռ-եպո գործարքի հայտը համարել բավարարված:

Արժեթղթերի թողարկման համարը			
Գործարքի ծավալը			
Տոկոսադրույքը			
Գործարքի գինը			
Գործարքի կատարման օրը			
Գործարքի մարման օրը			

\*

«\_\_\_\_\_» բանկ

ՀՀ ԿԲ նախագահ/գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

-----

Կ.Տ «\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թ

\* իրավասու էլեկտրոնային հասցեներից ներկայացնելու դեպքում պարտադիր չէ

ՀԱԿԱԴԱՐՉ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ  
ՀԱՅՏ N

Ներկայացվում է համաձայն «\_\_» «\_\_\_\_\_» 20  
թվականին կնքված Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կնքման  
գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «\_\_\_\_\_» բանկին  
վաճառել Արժեթղթեր հետևյալ պայմաններով.

Գործարքի գինը	
Տոկոսադրույքը	
Գործարքի կատարման օրը	
Գործարքի մարման օրը	

\*

«\_\_\_\_\_» բանկ  
Գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

-----

Կ.Տ «\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թ.

\* իրավասու էլեկտրոնային հասցեներից ներկայացնելու դեպքում պարտադիր չէ

ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄ

Առաքվում է «\_\_\_\_\_» բանկին

«\_\_\_\_\_» բանկը համաձայն «\_» «\_\_\_\_\_» 20  
թվականին կնքված Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր  
համաձայնագրի դրույթների մերժում Գործարքի կնքման համար «\_» «  
» 20\_\_թ. ժամը «\_\_\_\_\_»-ին \_\_\_\_\_» բանկ  
ներկայացված N \_\_\_ հայտը:

\*

«\_\_\_\_\_» բանկ

ՀՀ ԿԲ նախագահ/գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

-----

Կ.Տ

«\_» «\_\_\_\_\_» 20\_\_թ.

\* իրավասու էլեկտրոնային հասցեներից ներկայացնելու դեպքում պարտադիր չէ

Արժեթղթերի ընթացիկ գինը հաշվարկվում է.

ա) ՀՀ պետական կարճաժամկետ պարտատոմսերի համար՝

$$U U / [ 1 + ( \text{ԵԿ} * O ) / 360 ]$$

որտեղ՝

U U - Պարտատոմսի անվանական ծավալն է,

O - մինչև մարումը մնացած օրերի քանակը

ԵԿ – Կողմերի միջև կնքվող Գործարքի Արժեթղթերի ընթացիկ գնի հաշվարկման տոկոսադրույքն է, որը հաշվարկվում է Կենտրոնական բանկի կողմից «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցով տրամադրվող կամ Կենտրոնական բանկի պաշտոնական տնային էջում տեղադրված օրական կտրվածքով տրամադրվող եկամտաբերության կորի հիման վրա:

բ) ՀՀ պետական (գանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի և ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի համար

$$Q \cdot Q = \frac{U}{1 + \frac{a \cdot \text{եկ}}{100 \cdot b}} \cdot \left[ \frac{u}{100} \cdot \sum_{j=1}^m \frac{1}{\left(1 + \frac{\text{եկ}}{100}\right)^{j-1}} + \frac{1}{\left(1 + \frac{\text{եկ}}{100}\right)^{m-1}} \right],$$

որտեղ՝

Q·Q- Պարտատոմսի գնման գին

u - արժեկտրոնի փուլային եկամտաբերություն

U- Պարտատոմսի անվանական արժեքը

a - մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվը

b- փուլի տևողությունը օրերով

m- այդ պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

եկ-փուլային եկամտաբերություն

$$u = ((1 + S/100) / k - 1) * 100$$

$$\text{եկ} = ((1 + \text{ԵԿ}/100) / k - 1) * 100$$

S - Արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն

k - Մեկ տարում արժեկտրոնների վճարումների թիվը

ԵԿ – Կողմերի միջև կնքվող Գործարքների Արժեթղթերի ընթացիկ գնի հաշվարկման տոկոսադրույքն է, որը հաշվարկվում է Կենտրոնական բանկի կողմից «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցով տրամադրվող կամ Կենտրոնական բանկի պաշտոնական տնային էջում

տեղադրված օրական կտրվածքով տրամադրվող եկամտաբերության կորի հիման վրա:

գ) ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի համար՝

$$Q. Q = U/m * \sum_{j=1}^m \frac{(u*(m-j+1)/100) + 1}{(1+ել*a/(100*b)) * (1+ել/100)^{j-1}}$$

որտեղ՝ Q. Q- Պարտատոմսի գնման գին

տ - Արժեկտրոնի փուլային եկամտաբերություն

Ա- Գործարքի պահին Պարտատոմսի անվանական արժեքը

b- Տվյալ փուլի փաստացի տևողությունն օրերով

a - Մինչև առաջիկա մարում օրերի թիվը

m- Այդ պահին մնացած մասնակի մարումների

(արժեկտրոնների վճարումների) թիվը

ել-Փուլի եկամտաբերություն

որտեղ՝  $u = ((1+S/100)1/k - 1) * 100$  ;

$ել = ((1 + Եկ/100)1/k - 1) * 100$

S - Արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն

k - Սեկ տարում մասնակի մարումների և արժեկտրոնների վճարումների թիվը

ԵԿ – Կողմերի միջև կնքվող Գործարքների Արժեթղթերի ընթացիկ գնի հաշվարկման տոկոսադրույքն է, որը հաշվարկվում է Կենտրոնական բանկի կողմից «Մի Բի Էյ նեթ» միջբանկային համակարգչային ցանցով տրամադրվող կամ Կենտրոնական բանկի պաշտոնական տնային էջում տեղադրված օրական կտրվածքով տրամադրվող եկամտաբերության կորի հիման վրա:

ՌԵՊՈՒ/ՀԱԿԱԳԱՐՁ ՌԵՊՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն  
ք. Երևան

«\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թ.

«\_\_\_\_\_» բանկը՝ ի դեմս գործադիր տնօրեն (վարչության նախագահ) \_\_\_\_\_-ի մի կողմից և «\_\_\_\_\_» բանկը՝ ի դեմս գործադիր տնօրեն (վարչության նախագահ) \_\_\_\_\_ի մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի միջև «\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թ. կնքված «Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագրի» 2.3.4 կետով ,

ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ, ՈՐ

1. Միմյանց միջև Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքները կարող են կնքվել նաև ՍՎԻՖՏ համակարգի միջոցով:
2. ՍՎԻՖՏ համակարգի միջոցով Ռեպո/Հակադարձ ռեպո գործարք կնքելիս Կողմերն օգտագործում են հետևյալ միջազգային ֆորմատները՝
  - 2.1 հայտ/հայտի հետ կանչում՝ MT 502.
  - 2.2 հայտի հաստատում՝ MT 515.
  - 2.3 հայտի մերժում՝ MT 509.
3. Հաղորդագրության այլ տիպերի օգտագործմամբ ներկայացված առաջարկը և/կամ առաջարկի հաստատումը/մերժումը իրավական ուժ չունեն:

Կողմերի ռեկվիզիտները

«\_\_\_\_\_» բանկ

«\_\_\_\_\_» բանկ